

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## «ԲՆԻԿ ՏԵՐԵՐ» ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

### ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մասին ստեղծված քննական տարաշերտ սկզբունքների ու տեսակետների, ելորպացի հայագետների դիտարկումներին շաղախված անթաքույց նիհիլզմի, արևմտահաճությամբ տողորված հայ պատմաբանափրական հետազոտությունների մեջ, որպես կանոն, ուշադրությունից դուրս է մնում ցանկացած գիտական կամ գեղարվեստական ստեղծագործության վերլուծության կարևոր սկզբունքներից մեկը՝ իր նյութի նկատմամբ հեղինակի վերաբերմունքի, դրա նպատակադիր ուղղվածության քննությունը։ Միայն այդ դեպքում բացատրելի կրառնան պատմական փաստերի ու անձերի անձշտությունները, վրիհպումները, որոնք ինքնին օբյեկտիվորեն անխուսափելի են գիտական-գեղարվեստական լայն ընդգրկումներ ունեցող ստեղծագործությունների մեջ։ Պատմահոր մեծ մատյանը ծնունդ է առել 428 թ. հայոց պետականության անկումից մոտ 60 տարի հետո, և պարզ է ու պատճառաբանված, որ հեղինակային վերաբերմունքի կարևոր հիմքերից մեկը պետք է լիներ ազգային ծագումի ու շարունակության տրամաբանությամբ, պատմահոգեբանական ընդիհանրացումներով ծագումնաբանական գաղտնիքներ բացելը, ուղիներ ցուցադրելը, որոնք կենսունակ են լինելու նախ և առաջ անիշխանության ու պետականության կորստի ժամանակներում։ Այս առումով Խորենացին հենց սկզբից հետաքրքիր դիտանկյուն է ակնարկում։ «...Հանդէս է մեր, ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն իին նախնիս»<sup>1</sup> («Մեր նպատակն է ոչ թե պատմությունն ամբողջությամբ գրել, այլ աշխատել ցույց տալ մեր առաջին և բուն իին նախնիներին»)։

Սա պատմական հնարավոր շեղումներից ու բացքողումներից կանխապահովման հոգսը չէ բոլորովին, այլ գոյաձևային փաստարկումների առաջնության ընդգծումը, որ պատմիչը ուղղակի միջամտություններով հաճախ է անում, իսկ ծրագրային բանաձևումը տալիս է հետևյալ ձևակերպմամբ։ «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան՝ Հայկ, Արամ, Տիգրան, քանզի ըստ իմ՝ քաջաց ազգք քաջքն. իսկ միջոցքն՝ որպէս դէպ ումեք թուիցի կոչել» [էջ 76] («Ուստի ես սիրում եմ ըստ քաջության այսպէս կոչել՝ Հայկ, Արամ, Տիգրան, որովհետև քաջերի սերունդները քաջերն են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպէս ուզում է, թող կոչի»)։ Կատարելատիպ այս հերոսների առանձնացումը իմաստ է ստանում ոչ միայն

<sup>1</sup> «Մովսես Խորենացու Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 34 (այսուհետև մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում)։

բնիկության գաղափարաէթիկական բովանդակությամբ, այլև ամենից առաջ ապագա բոլոր ժամանակների՝ պետականության առկայության ու դրա չգոյության պայմաններում ուսուցողական-խրատաբանական նշանակությամբ: Յայկի մեջ ընդգծվում է ազատասիրությունը, երբ նա գերադասում է հեռանալ իր տնից, հետո ընտանիքով գոյության կովի ելնել, եթե պետք է, կորցնել թեկուց կյանքը, բայց ոչ ազատությունը, քանի որ արդեն անազատ է նա, ով չունի ազատության գիտակցությունը: Արամի մեջ պետականության խորհրդի ամփոփումն է, երբ նա ցեղային միությունների վիճակից պետության անցնան մեջ գտնվող երկրի սահմաններն ընդլայնում է բնօրրանից դեպի արևելք (հաղթելով մեղացի Նյուքար Մադեսին), հարավ (հաղթելով ասորեստանցի Բարշամին), արևմուտք (հաղթելով Տիտանյան Պայապիս Քաղաքանին)<sup>2</sup>, կազմավորում է չորս Յայքերը, այսինքն՝ ամբողջացնում է պետության աշխարհաքաղաքական սահմանագծումն ու վարչատարածական բաժանումը՝ որպես ատրիբուտ, ստիպում, որ իր երկրում բոլորը խոսեն հայերեն (պետական լեզվի ատրիբուտը) և այնքան մեծ ծանաչման է հասնում, որ ուրիշ ազգեր ու հարևան երկրները մեզ նրա անունով են կոչում (միջազգային ծանաչման ատրիբուտը): Իսկ բոլորից ամենաքաջի ու խոհեմի՝ Տիգրանի միջոցով փորձում է կանխել հետագա անշշանությունից ծնունդ առնող խեղճությունից առաջացած արժանապատվության հնարավոր կորստի վտանգը, որ պիտի հաղթահարվեր «լուծ կրողից լուծ դնող» անցումի ուժով, և այդ ուժի բերած ազգային միասնականությունը պիտի հիմնավորվեր համընդիանուր ազգային բարօրության ապահովմամբ, որ Տիգրանն արեց՝ «ամեն մեկի կյանքը իր մտքի լծակով կշռելով, ամենքի վրա իր խնամքի զգեստը տարածելով»: Այս կատարելատիպային դրսևորումներից հետագա դարերում մանավանդ այսօր, մենք այդպես ել դաս չառանք, թեպետ պիտի հուսանք, որ «բնիկ տերերի» մասին Պատմահոր աշխարհայացքային ընդգծումները պահպանում են մշտարդիհական կենսաբերությունը:

Եվ այսպես, խորենացին իր գորի բուն նպատակն ու առաքելությունը համարում է հետևյալը. «Մեզ խոյ խնդրոյս առաջի արկանել՝ երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւն, ծշդիւ զբագաւո-

<sup>2</sup> Ավելորդ չի լինի հիշել, որ հյուսիսը Յայաստանն է, Յայկն էլ դեպի հյուսիս է գալիս, մինչև հասկի «Արարադի երկիրը», իսկ Ս. Գրքի Երեմիայի, նաև Եզեկիելի մարգարերությունների մեջ նշվում է, որ եղիպտական գերությունից դաս չառած և կրկին բարոյական անկումների մնաված հրեաներին Աստված որոշել է նորից տեղահան անել, այս անզամ դեպի արևելք, որ նրանք ևս կրեն խառնակ քաղաքի՝ Բաբելոնի կործաննան ողբերգությունը, «որովհետև ահա են կլանչեմ հյուսիսի բոլոր թագավորների ցեղերը...» (Երեմիա, գլ. Ա), իսկ Բաբելոնը բանական ուժերով կործանելու կոչը Աստված հոլով է այսպես. «Դրոշակ բարձրացրեք երկիր մեզ, փող հմտեցրեք ազգերի մեջ, ... հրավիրեցեք նորա դեմ Արարատի, Միննիի, Ասքանասի թագավորությունները» (Երեմիա, գլ. ԾԱ), և Տերը պետք է Բաբելոնի դեմ հանի «պարսիկները եթովացիները և փուղացիք նորանց հետ, Գոմերը,...Թղրգոնի տունը՝ հյուսիսի ծայրերիցը և նորա բոլոր գունդերը» (Եզեկիել, գլ. ԼՇ): Կրկնենք, որ Յայաստանի անվանադիր տարրերակներից են Արարատի տերությունը, Ասքանասի գունդը և Թղրգոնա տունը: Ի դեպ Խաչատուր Աբովյանը ևս հայոց ծննդաբանության տարածածանակային ընդգրկումների մեջ անցյալից ապագա թթիչքի լուսավորությունը ձևակերպում է այսպես. մայր Արարասը «պիտի պատճի և Կասպիական ծովի ափերին, և ամենահեռավոր սերունդներին՝ Յայաստանի-Արարատյան երկրի-Թղրգոնյան-Ասքանասի տան» երանելի ժամանակների մասին (Խաչատուր Աբովյան, Երկեր, Եր., 1984, էջ 683):

րացն և զնախարարականացն ազգաց և տոհմից, թէ ով յունմէ, և զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ով ոք ի ցեղից որոշելոց ընտանի և մերազնեայ, և ոյք ոմանք եկը ընտանացեալք և մերազնացեալք» [Էջ 13] («Մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել՝ երկար և շահավետ գործով ճշտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախարարական ցեղերի և տոհմերի մասին, թէ ով ունից է ծագել, ինչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, և որն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է, և որոնք եկվորներ են և հայացած բնիկ են դարձել»): Խորենացին, իսկապես, նանրակրկիտ հետազոտությամբ ճշտում է բնիկներին՝ նրանց նկատմամբ շարունակ չթաքցնելով իր ոգևորված գնահատումներով՝ անկախ անձի կամ գործի ազգային կարևորությունից, և սրան գուգահեր, պահում չափավոր սրափությունը հայացած եկվորների թեկուզ անենանշանավոր գործերի նկատմամբ: Անընդիհատ վերլուծական գեղումներով ընդմիջարկություններ անելով, թէ՝ «Եւ այժմ ահա զուարծացաց ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս մերում իսկ բնիկ նախնույն, յուրում սերունդը թագաւորութեան հասանեն յաստիճան» [Էջ 68] («Ահա այժմ ես կուրախանամ՝ ոչ փոքր խնդություն զգալով, որ հասնում եմ այն տեղերը, ուր մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում»), կամ՝ «Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոյ թագաւորեն սիրելիք, որպէս բնիկը և ինոյ արեան առուք, և հաւաստի հարազատք» [Էջ 69] («Որովհետև մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի՝ իրու բնիկներ, արյունակիցներ»): Պատմիչը բնիկ հայկազուն է հանարում երվանդ Սակավակյացով սկզբնավորված երվանդունիների թագավորական հարստությունը և տարբեր ժամանակներուն ձևավորված Մանավազյան, Բզնունյաց, Որդունի, Խորխոռունի իշխանական տները, Սիսական ցեղը, Վարաժնունյաց տունը, Անգեղա տունը, Սիսակի սերունդ Առանից առաջացած Ուտեացիների ազգը, Գարդմանացիների, Շավինացիների և Գարգարացիների իշխանությունները, Վահունիները, որ սերված են համարվում Վահագնից, սրա թոռ Զարեհից առաջացած Զարեհավանյան ցեղը, Ապահունյաց նախարարությունը, Ռշտունիները, Աշոցան ցեղը: Եթե այս ընթացքում ինչ-որ բան, իր կարծիքով, վստահելի ճշնարսություն չէ, ապա Խորենացին չի հապաղում ներկայացնել իր երկմտանքը, թեպետ թվում է՝ անորոշության երանգ է մնում նաև այն դեպքում, եթի ինչ-որ նախարարության ծագումը ճշտելիս սկսում է «ասում են» սուբյեկտիվացնող ձևակերպմանը: Իսկ այս դեպքում նա ուղղակի ընդգծում է կասկածը, եթի, օրինակ, նշում է, որ Սլկունիները ծնվել են Սլաք անունով մարդուց, «զոր ոչ կարեն հաստատեաւ ասել, ի Յայկա՞յ եթէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհին... բայց էր այր քաջ» [Էջ 109] («Որի մասին հաստատ չեմ կարող ասել՝ արդյոք Յայկի՞ց էր ծագել, թէ՝ նրանից առաջ մեր երկրում ապրողներից ... բայց քաջ մարդ էր»):

Անմիջապես ակնառու է ազգաբանական առումով մի կարևոր ընդհանրացում. որոշ բացառություններով հանդերձ (Ռշտունիներ, Խորխոռունիներ)՝ այս նախարարական տները չեն, որ հայոց պատմության ծակատագրական պահերին և անցումային վիճակներում կարևոր դեր են խաղացել, և անկախ Խորենացու ներբողային նվիրումներից՝ ենթատեքստա-

յին փաստերը ակնարկում են դրա ինչ-ինչ պատճառները, որոնց որոշ շերտեր այս կամ այն կերպ կապվում են հայոց տիրակալ ուժերի կամ «Եկվորտերի» անուղղակի դիրքորոշումների հետ :

Այսպիսով, ըստ Խորենացու՝ օտարածին են պարթև Արշակունիների հայ թագավորական տունը, Բագրատունիները, Մամիկոնյանները, Արծրունիները և Գնունիները (սրանց ասորական ծագումը նկատի ունենալով է, որ «մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին» [էջ 72] - «Մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է նոյն Ասորեստանի սահմանների մոտ»), Գուգարացիները, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ՝ Դարեհի նախարարի») [էջ 107], Պահլավունիները և Կամսարականները՝ Պարթևների կամ Արշակունիների հետ ազգակցական կապերով, Մուրացյան ցեղը, որ մարական ծագում ուներ («...ի ծննդոցն Աժդահակյա»), Ամատունիները, որ պարսկական ծագում ունեն՝ հրեական ակունքով («Յաւուրս սորա ասեն եկեալ զազդ Ամատունեաց ի կողմանցն արևելից Արեաց աշխարհին: Բայց են սորա բնութեամբ Հրեայ ի Մանուեայ ունեմնէ») [էջ 185] («Ասում են, թե սորա ժամանակ է եկել Ամատունիների ցեղը Արյաց երկրի արևելյան կողմից: Բայց սրանք բնիկ հրեաներ են՝ մի ոճն Մանուից»), Արտաշեսը ստեղծում է նաև Դիմաքսյան և Տրունի նախարարական տները<sup>3</sup>:

Հստակ է օրինաչափության երկրորդ կողմը՝ այն, որ հայոց պատմության թատերաբեմում կարևոր դեր են խաղացել այս «Եկվորտերերը», որոնց խորենացին ընկալում է որպես «բնիկ դարձածներ»: Բայց ակնհայտ է դառնում հաջորդ գաղափարական դիրքորոշումը. որքան էլ սրանց կարևոր գործերը արժանավորող գնահատումներով են ներկայացվում, Պատմահայրը ցուցաբերում է սրափ չափավորություն, համենայն դեպք, բնարազեղումային ներբողների համարյա չի դիմում, որոնք հիմնականում չի զապում Յայկազունիների թեկուզ աննշան թվացող քայլերը ներկայացնելիս, էլ չենք ասում վերևում հիշած՝ նրա ուղղակի բանաձևային ընդմիջարկումների մեջ գովեստային իմաստավորումների և դրանց ազգաբանական նշանակության մասին, որ նկատելի է անգամ ժամանակային սահմանագիծը ակնարկելիս. «Արդ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանավանդ թագաւորաց, մինչև ցտերութիւնն Պարթևաց» [էջ 69] («Այժմ ես կանցնեմ թվարկելու մեր մարդկանց, մանավանդ թագավորներին, մինչև

<sup>3</sup> Որպես խորիելու տեղիք տվող վարկած՝ նկատելի է մի թաքուն օրինաչափություն. դա հրեաների հետ համեմատություն առաջադրելու հակումն է: Զի կարող միայն դեր խաղացած լինել այն, որ ընդհանրապես ծագումնաբանությունը պիտի կապվի Աստվածաշնչյան ակունքի հետ, քանի որ Խորենացին Բագրատունիներին պարզապես սերված է համարում ոմն հրեա Շամբատից: Այլ է հայոց Արշակունիներին ծնունդ տված պարսկի Պարթևների ծագումը, որի մասին պատմիչը երկրորդ գլուխ վերջերում տեղեկացնում է. «ՅԱՀԱՄԱՅ քսաներորդ առաջներորդ նահապետ մեզ զԱբրահամ աստուածային պատմութիւնքն ցուցանեն. և ի նաման եղեալ ազգոր Պարթևաց» [էջ 202] («Սուլր Գիրքը մեզ ավանդում է, որ Աղամից սկսած՝ քսաննեկերորդ նահապետն էր Աբրահամը, որից առաջ է եկել Պարթևների ցեղը»): Յամեմատության ենթատեքստեր է հուշում Ողբեում ներկայացվող հակադրությունը, երբ պետականության անկումից և ուսուցիչների մահից հետո ստեղծվեց անելանելի վիճակ, «որովհետև Սովունը վերացվում է, բայց Քեսուն չի հաջորդում ...Եղիան համբարձվեց, բայց Եղիսեն չնաց կրկնակի հոգով» և այլն:

Պարթևների տերությունը»), որի անմիջական շարունակությունն է իր հետ արյան կապ ունեցող «բնիկ հարազատք»-ի սիրելիության ընդգծումը: Գուցե այս հիմքի վրա է ինչ-որ չափով բացատրելի դառնում Տիգրան Մեծի շփոթմունքը: Խորենացին կատարելատիպ է դարձնում Տիգրան Երվանդյանին՝ հենց սկզբից հուշելով սահմանը. «Կտանգ հասանէ այնուհետև Աժդահակայ պատահել պատերազմաւ Յայկազինն ոչ փոքր ինչ ամբոխիւ» [էջ 83] («Կտանգը հարկադրում է Աժդահակին Յայկազունի դեմ ելնել պատերազմի՝ ոչ փոքր բազմությանը»), հետո էլ ավելացնում, որ այս Տիգրան Երվանդյանի մասին գրույցները նրան սիրելի պիտի դարձնեն ոչ միայն իրեն, այլև ընթերցողներին, քանի որ՝ «Բազումք անուանեալ Տիգրանք, մի է և միայնակ ի Յայկազանց» [էջ 87] («Շատերը կան Տիգրան անունով, բայց սա մեկ է և միայն Յայկազուններից»): Մինչդեռ փաստ է, որ Աժդահակի հետ կապված վիպական գրույցի գեղարվեստական մանրամասների կողքին այլ ծավալուն ընդգրկում ունի բուն Տիգրան Մեծի գործերի անգամ տարեգրական իշխատակումը (Դաշնակցությունը Միհրդատ Պոնտացու հետ, Յոռմի Պոմպեոս գրուավրին դիմադրելը, Կրասոսին սպանելը, Կասսիոսի դիմադրությունը, Անտոնիոսի հարձակումը, Կլեոպատրայի տիրակալության նկատմամբ դիրքորոշումը, այս բարդ ու վեհ շրջանում Տիգրանի խորամիտ պահկածքը, Երկրի հզորացումը, հելլենիզմի հաղթարշավը, պատկառելի կառուցումները), և ժամանակի համաշխարհային պատմությանը քաջածանոթ, պատմական զարգացումների տրամաբանությունը խորքով ընկալող խորենացին դժվար թե չկարողանար որոշակի գնահատել Արշակունիների ճյուղ կազմող Արտաշեսյան Տիգրանի իրական մեծությունը հայկազուն Տիգրան Երվանդյանի համեմատությամբ:

Դրա փոխարեն՝ պատմիչին ոգևորության այլ լիցքեր են հաղորդում «բնիկների» ամենափոքր քայլերն անգամ: Սիսակի սերնդից Առանին ներկայացնում է որպես «զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին» [էջ 106] («Անվանի մարդ, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում»): Սի այլ օրինակ. Արտաշես Առաջինը իր որդի Տիգրանին զինավարժություն սովորեցնելու համար հանձնում է Գեղամի զարմից Գառնիկի սերունդ Դատի որդուն՝ Վարաժին, «քանզի էր պատանին նշաւակ ի նետաձգութիւն կորովութեան» [էջ 115] («Որովհետև այդ պատանին նշանավոր էր կորովի նետաձգությամբ»): Նույնիսկ հայկազուն սերունդներին մերձավոր ՎՃԵՆԵՐԻ հին ցեղի սահմանափակ ուժի մեջ հարկ է համարում գովելի որակներ տեսնել. «...Որք միանգամ անազգիք էին ի վաշտս և անձամբ երևելիք ... զյառաջագունից ասացելոց մօտաւորաց ՎՃԵՆԻց և զարմից հայկազանց» [էջ 196] (...Որոնք հեծելազորով աննշան էին, բայց անձամբ երևելի ... խոսքս վերաբերում է ՎՃԵՆԵՐԻն մերձավոր հին ցեղերին՝ Յայկազանց սերունդներից»): Չի վարանում անգամ անկարևոր թվացող միջադեպ պատմել, եթե դրանում «բնիկների» ամենասովորական մարդկային որակները հաստատող դրական երանգներ կան: Օրինակ՝ հիշում է, որ Սասանյան Արտաշիրի կողմից խոսրով Մեծի ընտանիքը կոտորելու ժամանակ «կոյս մի գեղեցկադիտակ ի քերցն Արտազդադայ գողացեալ Տաճատայ ուրումն, որ էր լեալ յազգէն Աշոցան, ի զաւակէ

Գուշարայ Հայկազնոյ, փախուցեալ ի կեսարացւոց քաղաքին ապրեցուցանէր, ամուսնաւորեալ ընդ ինքեան» [Էջ 216] («Տաճատ անունով մեկը, որ Աշոցան ցեղից էր, հայկազն Գուշարի զարմից, գողացավ մի գեղեցկադեմ կույս՝ Արտավազդի քույրերից և Կեսարիա քաղաքը փախցնելով՝ ազատեց կոստորածից և հետո ամուսնացավ»):

«Եկվորների» նկատմամբ չափավորությամ պատճառների մեջ, անկախ ազգային կարևորություն ունեցող նրանց գործերից, Խորենացին երբեմն նկատել է տալիս նրանց քայլերի երկակիությունը՝ որպես կանոն, ուղղված բնիկների դեմ, որ կարող էր բացասական լինել երկողմանիորեն՝ բոլոր դեպքերում վտանգելով պետականությունը, որը Խորենացու համար միշտ առաջնայինն էր, և «քնիկ տերերն» էլ իմաստավորվում էին հենց որպես պետականության խորիդանիշներ: Այս առումով խորքային ընդգրկումներ ունեն առաջին Արշակունի Վաղարշակի, որ դեռ պարսիկ-պարթե էր, գործունեությունն ու կերպարը: Բարձր գնահատելով պետականության կարգավորմանն ու ամրապնդմանն ուղղված այս օտարամուտ թագավորի արդյունավետ ջանքերը՝ Խորենացին չի թաքցնում նաև Հայաստանում նրա առկայությունը պայմանավորող ներքին ու արտաքին քաղաքական հանգամանքները, անմիաբանության առաջացրած անկումները և իր անթաքույց ցավը այս ամենի վտանգավորության համար՝ անկախ բարեբախտ արդյունքից: Հայկազուն թագավորների մասին տարեգործուները հասցնում է մինչև Ալեքսանդր Մակեդոնացու դեմ ապստամբած Վահեի շրջանը և անցում կատարում իմաստավոր ընդմիջարկությամբ. «Յայսմ յետէ մինչև ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Յայս՝ ոչ ինչ ծշնարտագոյն ունիմ պատճել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ, այր զարանք ելանէին տիրել աշխարհիս. և վասն այսորիկ դիլրամուտ ի Յայս լեալ Արշակ մեծ, թագաւորեցուցանէ գեղքայր իւր Վաղարշակ ի վերայ աշխարհիս Յայնց» [Էջ 88] («Այստեղից սկսած մինչև Վաղարշակի թագավորելը Հայաստանում՝ ստույգ բան չունեմ քեզ պատճելու, որովհետև խառնակություններ ու շփոթություններ լինելով՝ մեկը մյուսից առաջ էր վազում մեր երկրին տիրելու: Այս պատճառով էլ Արշակ Մեծը, ոյուրավ Հայաստան մտնելով, իր եղրորը՝ Վաղարշակին, թագավորեցնում է Հայաստանի վրա»):

Սա պատճական իրավիճակի քննական գնահատական է, որին հաջորդում են նույն այս Վաղարշակի կերպարում և գործերի մեջ պետականության ատրիբուտներն անբողջացնելու մշտարդիական նպատակն ու ծրագիրը: Նախ՝ նույն չափավոր սրակությամբ տալիս է կերպարի ընդհանուր բնութագիրը՝ կրկին ներտեքստային խորքում նրբորեն բնիկության խնդիրը ակնարկելով: Ուրեմն՝ Վաղարշակը՝ «այր քաջ և խոհեմ, ընդարձակաց ի վերայ սահմանաց իւրոց. և կարգս կենցաղականս, որչափ մարթեր, սահմանեաց աշխարհիս» [Էջ 97] («...Քաջ և խոհեմ մարդ լինելով՝ տիրեց իր սահմաններում և կառավարման կարգեր հաստատեց մեր երկրում, որքան կարող էր»): Այսինքն՝ տիրակալեց ոչ թե իր երկրում, այլ իր սահմաններում, և կարգավորեց մեր երկիրը, այն էլ՝ որքան կարող էր: Նրա կատարած գործերի համընդգրկունության հիմնավոր ցուցադրումների մեջ սա բավականին գուսաց գնահատական է՝ սառն ակնարկներով:

Պետականության կարևոր խորհուրդներից մեկը, որը Վաղարշակի առաջին քայլերից էր, իրեն տիրակալության տրված երկրի ու ազգի ճանաչումն է, որն, իհարկե, պետք է սկսվի անցյալից, և դրա դրսնորումը Մար Աբասին պարսից դիվաները հետազոտության ուղարկելն է՝ պարզելու, թե իրենից առաջ ովքեր են տիրել Յայաստանում, ինչ նախարարություններ են եղել, ինչ կարգեր ու պաշտամունքներ: Արտաքին սահմանների հաստատումից հետո հաջորդ քայլը պետք է լինի շատ ավելի կարևոր արժեք ունեցող ներքին կարգավորվածությունը, և Վաղարշակը կանոնավորում է արքունիքի կառուցվածքը, բանակը, ստեղծում գործակալություններ, որոնց մեջ նաև՝ բարի ու չար գործերը թագավորին ներկայացնող մարմին, սահմանում նախարարություններ, նրանց պաշտոնները և այլն: Այս ամենի կարևորությունը Պատմահայոր շեշտում է՝ կրկին իիշեցնելով, որ նման հավաստի պատմություններն արժանի են «ընդարձակ ու կոկիկ պատմվելու»: Բայց հարաբերությունները ոչ բացահայտ ենթաշերտեր են ներառում, եթե առաջ է գալիս «բնիկ տերերի» խնդիրը, ավելի որոշակի՝ վերաբերնունքը նրանց նկատմամբ:

Ակնհայտ է դաշնում, որ Վաղարշակը, որքան էլ պարտավորված պիտի լիներ անել դա և «նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս, որ ի զաւակաց նախնոյն մեր Յայկայ և յայլոց» [էջ 97] («հաստատեց նախարարությունների համար նահապետներ պիտանի մարդկանցից, որոնք ծագում էին մեր նախնի Յայկի սերնդից և ուրիշներից»), սակայն թաքուն զգուշավորությամբ Յայկագուններին տակիս է ոչ այնքան կարևոր պաշտոններ. դրանք հաճախ թատերականորեն ցուցադրական են: Այսպես, եթե շտապում է Բագրատունիներին թագադիր կարգել, ապա ամենանշանավոր բնիկ նախարարներից մեկի՝ Խոսխոռունիների տանից նշանակում է «թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Յայկազնոյ՝ արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս... իսկ զԴատ ի զաւակէ Գառնկայ, որ ի Գեղամայ, ի Վերայ որսոց արքունականաց կարգէ» [էջ 103] («Իրեն զինված թիկնապահներ է նշանակում Յայկազն Խոռոյի սերնդից ընտիր և քաջ նիզակաւոր և սուսերավոր մարդկանց... իսկ Ղատին, որ Գառնիկի զավակներից էր՝ Գեղամից սերված, նշանակում է արքունական որսերի վրա»): Դիվանագիտական պահվածքի մյուս թաքուն շերտն այն է, որ Վաղարշակը ձգտում է, որքան հնարավոր է, բնիկներին հեռացնել Այրարատից դեպի սահմանային նահանգները: Պետական սահմանի բնորոշ հատկանիշ համարելով «հայերեն խոսակցության վերջին գիծը»՝ Խորենացին նկատում է. «Եւ յարևելից կողմանէ զեզերը հայկական խօսից կողմնակալս, զերկու ցեղից նահապետութեանցն՝ Սիսակեան և Կաղմեայն ... կարգէ կողմնակալութիւն» [էջ 106] («Արևելյան կողմից՝ հայերեն խոսակցության վերջին սահմաններում, երկու կուսակալ է նշանակում նահապետական տների ցեղերից Սիսակյաններից և Կաղմոսի սերունդներից»): Նույն կերպ «մտավորական գործերում հանճարեղ Արանին» Աղվանքի կուսակալ է նշանակում: Սրան գուգահեռ՝ «ի հովտին մեծի Բասենոյ կարգէ նահապետութիւն զՈրդունին անուանեալ, որ ի զաւակացն Յայկայ: իսկ զայր որ ի զաւակէ Պասքանայ, ի Յայկակայ թոռնէ, Տորք անուն կոչեցեալ ... հաստատէ կուսակալ արևմտից»

[էջ 107] («Բասենի մեծ հովտում նահապետություն է հաստատում Որդունի անունով Յայկի սերունդներից: Իսկ Տորքին, որ սերվում էր Յայկի թռո Պասբամից, ... արևանուտքի կուսակալ է նշանակում»), ինչպես որ Ծոփաց երկրում հաստատում է Ապահունյաց նախարարությունը և Սանավագյան ու Քզնունյաց սերունդներին: Ինչ էլ լինի, «բնիկ տերերի» թեկուզ այսչափ արժուածումը, անկախ ներքին դիվանագիտական ենթատեքստերից, գնահատելի է համարվում Պատմահոր կողմից, և Վաղարշակին դրական կերպավորելու հիմքերից մեկը դառնում:

Յաջորդ Աղշակունիներից կամ «բնիկ դարձած» Արտաշեսյաններից Խորենացու համար գնահատելի են Արտաշես Առաջինը և Երկրորդը, մանավանդ Երկրի ներքին տնտեսական ու մշակութային հզորացումների և Յայկագունեների նույնանշանակ արժուածումների համար, ինչպես այն, որ Տիգրանը Ռշտունյաց նախարարության նահապետ Բարզափրանին սպարապետ է նշանակում: Յասկանալի է, որ առանձնահատուկ դրական բնութագիր է ստանում Տրդատ Մեծը, որը, դրանով հանդերձ, երբեք կատարելատիպերի մեջ չէ՝ հայերի դարձը կազմակերպելու դրակազմիկ փաստի համար, և նրան «մահու դեղ» տվող հայերին համարում է «չար և ստահակ ազգ», որ սիրում է «ունայնությունը և անաստվածությունը»: Եվ որքան էլ համարձակվում է ուղղակի հակադրություն տեսնել այն բանում, որ քրիստոնեությունը տարածելիս Տրդատն ու Գրիգոր Լուսավորիչը հավատի ամրությամբ հավասար էին իրար, բայց մարդկանց համոզելու մեջ թագավորը միշտ գերազանցում էր, միևնույն է, կյանքի վերջին շրջանում թագավորի մենանալու խորհրդավոր ձգտումն ու նույնքան խորհրդավոր վախճանը երկմտանքների տեղիք են տալիս: Ինչ-որ բան գուցե կարելի է պարզել հետևյալ իրավիճակների զուգադրումով և դրանում առկա ենթաշերտային մեկնությամբ: Նախ՝ Խորենացին չունի այս Երկու՝ Պարթև-Պահլավ նշանավոր գործիչների կողմից հայերի դարձի ընթացքում հեթանոսական մշակույթի հետևողական ավերի մանրանասն պատկերները և մանավանդ երևույթի նկատմամբ Ագաթանգեղոսի ոգևորությունը. Պատմահոր համար իհմնարժեքային էր ազգային գոյածնի մեջ մշակութային շարունակականության դերը, և հենց ինքն էլ պիտի հարթեր այն ահավոր ծեղբվածքը, որ քրիստոնեության մուտքով առաջացրին այս, համենայն դեպս, «ոչ բնիկ» գործիչները: Այնուհետև, եթե դրա ուղղակի վերլուծական հաստատումը Խորենացին չէր կարող տալ, ապա, կարծում ենք, անուղղակիորեն շատ խոսում է հետևյալ ենթատեքստային փաստարկումը: Արգար թագավորի և Քրիստոսի ավանդապատումային նամակագրությունը ներկայացնելով՝ արքայի կողմից քրիստոնեության ընդունման փաստը կարծես պատմիչին պետք է եղել ամենից առաջ հետևյալ հանգամանքը ընդգծելու. Արգարը «և ոչ ոք ածեր բռնութեամբ ի հաւատս, բայց օր ըստ օրի յաւելեալ ի հաւատացեալսն բազմանային» [էջ 147] («Ոչ ոքի բռնությամբ չէր դարձնում հավատի, բայց հավատացյալներն օր օրի վրա ավելանում էին»): Սա ակնառու գնահատականը չէ՝ քրիստոնեության տարածման բռնությունների, որից հետո հարկ էր լինելու տառապագին ճիգերով վերականգնել ազգային հիշողությունը, և մշակութային շարունակականության գոյածնային հիմունքի մեջ նորովի իմաստավորվում է «բնիկության» գաղափարադրութը, քանի որ այստեղ է ակունքը և հարաշարժության խորհուրդը:

Բացատրելի է, որ հետքրիստոնեական շրջանի Արշակունիների, նաև մյուսների նկատմամբ պատմիչի վերաբերմունքը ընդհանուր առմանը բացասական է, և նա չտեսնելու է տալիս անգամ գործող այդ անձերի մեջ ամենադրամատիկ և արդեն, ըստ էության, մինչև վերջ հայացած կերպարի՝ Արշակ Երկրորդի՝ ակնհայտորեն խարիսվող պետականության ամրապնդման ուղղված համարյա օրհասական ճիգերը. ներքին միասնականության ամրացման փորձը՝ նախարարական երկպառակությունների դեմ պարտադրյալ դաժանությամբ, հզոր հարևանների նկատմամբ դիվանագիտական խաղերի անարդյունք քայլերը, երբ հունաց կայսրերին «Նշկահեալ արհամարհեաց զնոսա. նա և ոչ զիետ Շապիոյ միտեցաւ ամենայն սրտիւ» [Էջ 276] («...Քանի տեղ չընելով՝ նրանց արհամարհեց, միևնույն ժամանակ նա Շապուհի կողմն էլ չդարձավ ամբողջ սրտով»): Եվ ահա խորենացու պատումի մեջ կրկնվում են վերջին Արշակունիների գնահատման կանոնիկ ձևերը. Տիգրանի որդի Արտավազդը «այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց... զիմաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ» [Էջ 131] («Ոչ մի արիություն ու քաջություն ցույց չտվեց՝ ... անփոյթ լինելով ուսման, քաջագործության և բարի հիշատակների»), Արտաշեսի որդի Տիրանի մասին «ոչինչ պատմին գործք մեծամեծք» [Էջ 191] («Ոչ մի մեծագործություն չի պատմվում»), սրա եղբայր Տիգրան Վերջինը «...Երկայնակեաց եղեալ, ոչ ինչ գործ արժանի յիշատակի ցուցեալ» [Էջ 195] («Երկար ապրեց, բայց ոչ մի արիության գործ ցույց չտվեց»), նույնը՝ Խոսրով Կոտակը, իսկ սրա որդի Տիրանը ևս «կայր ի հանդարտութեան իբրև զիայր իւր, ոչ ինչ արութիւն քաջութեան և սորա ցուցեալ» [Էջ 266] («Խաղաղ ապրում է իր հոր նման՝ նույնպես ոչ մի քաջագործություն ցույց չտալով») և այսպես շարունակ:

Նկատելի է նաև, որ Խորենացին, ունենալով պատմաքննական հստակ դիրքորոշում և դրանուն առանցքային համարելով իր համար կարևոր բնիկության գաղափարադրույթները, IV դարի արտաքին անքարենպատ պայմանների, Բյուզանդիայի և Պարսկաստանի հայակործան քաղաքականության ամբողջական ընկալումների մեջ հակված է անկումների պատճառը առավելապես տեսնել Արշակունի վերջին արքաների թերությունների մեջ: Նույնն էր անում նաև Փավստոս Բյուզանդը՝ այդ կերպարների Երկակիության վիպական շերտերում գերակայությունը տալով բացասականին: Իսկ ոչ բնիկ և հայացած հայտնի նախարարական տների նկատմամբ Խորենացու վերաբերմունքը չեզոք է, որոշ բացառություն կազմում են միայն Մամիկոնյանները: Նշելով, որ Խոսրով Կոտակը «փոխանակ Միհրանայ կարգէ զԳարջոյլ Մախսազ նահապետ Խոբխոռունեաց ի վերայ օգորուն» [Էջ 264] («Միհրանի փոխարեն գործի վրա նշանակում է Գարջոյլ Մախսազին՝ Խոբխոռունիների նահապետին»), կամ՝ Տիրան բագավորի կողմից Յուսիկ կաթողիկոսի սպանությունից հետո մի այլ Յայկազուն՝ հայոց հարավային գնդի հրանանատար Ռշտունյաց Զորա նահապետը, «լուեալ զայսպիսի համբավ, ասէ զգօրս իւր. Մի վարեսցուք հրամանաւ այնորիկ, և մի ճանապարհակցեսցուք այսմ ամբարիշտ թագաւորին» [Էջ 270] («Այդ լուրը լսելով՝ ասաց իր զորքին. «Զվարվենք այն մարդու հրամանով և չուղեկցենք այս ամբարիշտ թագավորին»), պատմիչը նույն

կերպ տեղեկացնում է, որ Վահան Ամաստումին աչքի է ընկնում իր քաջագործությամբ, ուստի «պարզեւ նմա արքա զտեղի ճակատուն՝ զՕշական, որ ինքնակամ դիմագրաւ նահատակն եղև» [Էջ 264] («Նրան է պարզեւ ճակատամարտի տեղը՝ Օշականը, որտեղ Վահանն ինքնակամ դեմ ելավ ու մենամարտեց»): Կամ՝ Մամիկոնյան նախահայր ճենացի Մամգոնի խոհեմ քայլերի մեջ նշում է նաև, որ նա, «Պարսկաստանից Յայաստան վտարվելով այն ժամանակ, երբ Տրդատը հունաց զորքով գալիս էր տիրելու հայրական գահը, «հանդիպեցաւ գալստեանն Տրդատայ, և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղիսիւն իւրով ընդ առաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ» [Էջ 223] («Պատահեց Տրդատի գալստյանը և պարսից զորքերի հետ չվերադարձավ, այլ իր բոլոր տնով-տեղով Տրդատին ընդառաջ գնաց մեծ ընծաներով»), և սկսեց հավատարմորեն ծառայել հայոց արքաներին: Բայց այստեղ Վաչե, Վասակ, Մուշեղ Մամիկոնյանները չունեն վիպական-կերպարային այն բացարձակացունը, ինչ տեսնում ենք Բուզանդի գեղարվեստական պատումի մեջ: Նրանց ինչ-ինչ գործեր խիստ համառոտ տարեգրվում են մեկ-երկու աննկատ դրվագում՝ իիմնականում գերծ փավստոսյան՝ հերոսականության և նվիրումի ուժից: Օրինակ՝ Վասակ Մամիկոնյանի կողմից իր եղբորը՝ Վարդանին սպանելը Բուզանդը բացատրում է վերջինիս պարսկահարությամբ, որ նոտ է դավաճանությանը: Խորենացին ևս նշում է Վարդանի և նրա մտերիմ Տիրիթի պարսկական հակունը, բայց սպանությունը բացատրում է այսպես. Արշակի «Վասակ զինակիր, նախանձ պահելով ընդ եղբորն վասն աղջկա միոց հարժի» [Էջ 285] («Զինակիր Վասակը եղբորը նախանձում էր մի հարց աղջկա պատճառով»)՝ սպանում է նրան: Ընդհանրապես ինքնասպան վիճակ համարելով ներքին անմիաբանությունը, որը հենց անիշխանության պատճառ ու արդյունք է, խորենացին երկու տեղ ցավով արձանագրում է Յայկազուն տոհմերի փոխադարձ կրիվներն ու ինքնառչացունը, բայց պատճառը ըստ էության «օրբեկտիվացնում է» արտաքին հանգամանքներով՝ մի տեսակ անորոշության մեջ թողնելով «բնիկ տերերի» անխուսափելի արատները, ինչպես որ չի բացցնում այդ առթիվ իր ողբային ապրումը. Տրդատի ժամանակ «Սգացեալ ի վերայ աշխարհիս Յայոց, որը յանիշխանութեան մնացեալք, յարեան ազգ ազգի վերայ նախարարութիւնք կոտորել զմիմեանս. ուստի և երեք տոհմըն, որ Բզնունականն և Սանաւազեանն և Որդունին անուանէին, սպառեալ բարձան ի միմիեանց» [Էջ 254-255] («...Սգալով հայոց աշխարհի վրա, որ անիշխանության մեջ մնալով՝ նախարարական ցեղերը մեկը մյուսի դեմ ելան՝ իրար կոտորելու, որով երեք տոհմեր՝ Բզնունականը, Մամավազյանը և Որդունին, ոչնչացան մեկը մյուսի ծեղբով»): Բնիկների այս ինքնառչացումների մեջ դեր խաղո՞ւմ էին տիրակալ թագավորական տան կամ արտաքին ուժերի դավադրությունները, թէ՞ ոչ, հարկ չկա գուշակության դիմելու, պարզապես կարելի է հիշել, թէ անգամ «խոհեմ» Վաղարշակը ինչպես և ինչ պաշտոնների էր արժանացնում և կենտրոնից հեռու ու ցրված պահում, ծայրամասերում տարածում Յայկազուններին: Դա ամեն մի երկրի և բոլոր ժամանակների արտաքին ու ներքին դիվանագիտական «բարոյականության» սկզբնաքայլն է՝ ընդունված ծներով:

Գիտաքննական մտածողության տեր և պատմական զարգացումների տրամաբանությանը քաջատեղյակ «Պատմահայրը, ժամանակի ու անհատական պարտադրանքների կամ սուրբեկտիվության տարրերով հանդերձ, սթափ վերաբերմունք է պահպանում հայոց պետականության ամրապնդման ու ազգային ինքնության պահպանմանը միտված բոլոր գործիչների քայլերի նկատմամբ, բայց կատարելատիվերի ընդօրինակելի դերը վերապահում է «քնիկ նախնիների» կերպարներին և այս գաղափարական հենքի վրա հաճախ ստիպված է ենթատեքստային հուշումներով հաստատել բնիկության ազգաբանությունը, դրա պատմական և մշակութային գոյածներ թե՛ պետականության, թե՛ անիշխանության ժամանակներում: Իր գրքի այս առաքելությունը ևս նա շեշտում է դասատվական որոշակիությամբ. «Դասարակաց խօսիւք անցանելով ընդ պատմութիւնս, որպէս զի մի ոք երևսցի ի պերճաբանութիւնս գրաւեալ առ փափազն, այլ ճշմարտութեան բանից մերոց կարուտեալ, ստեա ստեա և անհագ առնիցեն զընթերցումն պատմութեանց մերոց հայրենեաց» [Էջ 254] («... Դասարակ լեզվով այս պատմություններն անելով, որպէսզի այնպես չերևա, թե մեկը փափազում է կարդալ՝ պերճաբանությունից գրավվելով, այլ մեր պատմածների ճշմարտությանը կարուտելով՝ հաճախ և անդադար կարդան մեր հայրենիքի պատմությունը»):

Այսպիսով, իր Մատյանի նպատակը համարելով ոչ այնքան «պատմությունն ամբողջությամբ» գրելը, որքան «քնիկ նախնիների» ծագումն ու գործերը ցուցարելը՝ «Պատմահայրը երթեմն պարզողոց, երթեմն ենթատեքստային ակնարկներով, փաստագրմանը գուգահեռ արված «տեսական» ընդմիջարկումներով ու խոհական դիտարկումներով ցույց է տալիս «քնիկ տերերի» կամ Հայկազունների՝ որպես մշակութաազգաբարանական շարունակականության կրողների կենսակերպային նշանակությունը, հուշում դարերի մեջ նրանց դերի ու կարևորության նվազման դրամատիկ ընթացքը: Ցույց է տալիս օտարամուտ և բնիկ դառնալու հակումներով ու գործունեությամբ աչքի ընկնող քազավորական ու նախարարական տների տեղը հայոց պատմության թատերաբեմում, որ միշտ գուգակցվում է քնիկների նկատմամբ ուղղակի կամ թաքուն զգուշավոր պահպաժքով, նրանց «ծայրամասային» դերակատարում վերապահելով, կամ փոխադարձ կրիվների ու ինքնառչնչացումների հրահրումներով: Բնիկությունն է, ըստ Խորենացու, ոչ միայն պատմաաշխարհագրական ու քաղաքական, այլև պատմահոգեբանական ու մշակութային անընդմեջության միջավայրն ու շարժման կրողը, և այստեղ ցանկացած խզում ու ծեղծվածք կարող է ողբերգական դարձնել պատմությունը: Ահա թե ինչու Քերթողահայրը ինքն է փորձում հնարավոր ու անհնար միջոցներով, բայց միշտ մեկ անհատի ուժերից վեր աներևակայելի ընդգրկումներով փակել այդ ճարերը, քանի որ միայն այդ կերպ է հիշողությունը նաև գոյաբանական հիմունք դառնում, իսկ հիշողությունը անհատի կամ ազգի բանականության կարևորագույն արտահայտչաներից է, և դրա ամեն մի խաթարում դավադրապար պատրաստում ու քողարկում է հերթական անդունդը:

Այլապես ինչո՞ւ ենք այս անգամ էլ մի նոր «անտեղյակ» ընդարմացումով «մոռանում» Մովսես Խորենացու՝ հայ մտքի մեջի 1600-ամյակը ...

**ВАЗГЕН САФАРЯН – Генеалогическая категория “исконных владетелей” по Мовсесу Хоренаци.** – Целью Мовсеса Хоренаци было не столько создать “целостную историю” страны, сколько дать представление о происхождении и действиях ее “исконных владетелей”. То напрямую, то в подтексте, а подчас и путём авторского вмешательства он подчёркивал, что носителями культурного и генеалогического бытия нации являются исконные роды, потомки հԱյկա. Тогда как чужеродные, даже “арменизированные” правители (Вагаршак I Аршакуни и многие его потомки) относились к ним с явной или скрытой настороженностью, отводили им второстепенные роли, оттесняли к окраинам и провоцировали междуусобицы. Исконное происхождение Хоренаци считал не только историко-географической и политической, но и психологической и культурной категорией, символом бытия, поэтому любая лакуна могла привести к исторической трагедии. Заполняя лакуны и бреши, Хоренаци идеализированными образами утверждал, что эта логика жизни действует во все времена.

**VAZGEN SAFARYAN – Genealogical Category of "Native Rulers" According to Movses Khorenatsi.** – The aim of the work "History of Armenia" by Movses Khorenatsi is rather showing the origin and conduct of its "native rulers" than writing of "the entire story" of the country. And he, sometimes directly, sometimes by implication, often in the form of direct interference of the author confirms that the native representatives or the descendants of Hayk are the cultural and genealogical continuity of the nation, and that the aliens, even "Armenified" rulers, such as Vagharschak I Arshakuni and many of his descendants, belonged to the indigenous rulers with the explicit or implicit apprehension, they were given a secondary role, were possibly sent to the suburbs to probably provoke strife. Primordial origin, according to Khorenatsi, is not only historical-geographical and political, but also historical-psychological and cultural category, a symbol of existence, and here any gap can lead to historical tragedy. Khorenatsi thus fills all these gaps and by idealized images confirms the logic of life for the future with independent statehood or without statehood.